# ԼՐՈՅ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԱՐ 19. 20

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ԱՊՐԻԼԻ 4. ՈՐ Է 1247 ԶԻԼՔԱՏԷԻ 10

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ.

## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Պօսնայի բնակիչները խելմը ատեն էր, որ հնազանդութենէ դուրս ելած էին. ինչպէս հինգերորդ նումերայով սաս Լրոյ գրին մէջը գրուած էր. և ատոնց պէտք եղած պատիժը տալով, նորէն հնազանդութե ներքև խօթելու միօք, հարկաւոր պատրաստութիւնները եպարքոսի կողմանէ ըսկըսուած էր. բայց մինչև հիմա անոնց վրայ գնացուած չէր։

Պօշնաք ապստամբները հանդարտ չըկենալով Պօսնայի սահմաններուն մօտ եղած քանիմը տեղերու վրայ ձեռք երկընցընելէն ետ չէին կենար. Եւ Եպարքոսին կողմանէ նոյն տեղերուն վրայ հրամանատար եղօղները՝ միայն ատոնց դէմ կենալու, և իրենց քաղաքները պահպանելու կը հետևէին.

Այս անգամ Գուրբա անունով մէկ մը՝ Եէնի փազար ըլլած գիւղաքաղաքէն երկու թնդանօթով, և քանիմը հազար Պօշնաք ապստամբներով դուրս ելած էր. և անցեալ տարվընէ իրէն համախոհ եղած Լափ և Պուլաղ ըլլած տանուտէրէն շատ ապստամբներ հետը առնելով ռամազանի 25 ին Սէլճէթրին և Պրիլան ըլլած գիւղաքաղաքները եկեր պաշարեր է։

Այն ժամանակը Փէրիշթինացի իշխանաց իշխան Եէշար փաշայն, Փէրզէրին գաւառին բդէշխ Մահմուտ փաշային կողմանէ եկած զօրքերը՝ նախկին Պօսնայի բդէշխ Իպրահիմ փաշային քովը թողուց, որ Փէրիշթինէ գիւղաքաղաքը պահպանեն։ Եւ ինքն իր զօրքերովը և մէկ քանի գրամարտիկներով յիշեալ ամսոյն 29 ին Սէլճէթրինի օգնութեը հասաւ. և պաշարման մէջը եղօղ Սէլճէթրինի քաղաքապետ (այան) Մահմուտ պէկը և բնակիչները Եէշար փաշային հետ միացան, և ապըստամբներուն վրայ դիմեցին. և մէկ ժամ չափ սաստիկ պատերազմ ըրին. և օգնութե ամենակալին ով և բարեբաղդութե Ինքնակալին՝ Եէշար փաշայն յաղթեցին, և ապըստամբները աւըրուեցան և ցրուեցան։

Եւ այն երկու թնդանօթը և ռըմբաձիգները (թօփճիները), և կէսմը Պօշնաք կէսմը Արնաւուտ ապստամբներէն եօթանասունի չափ կենդանի, և երեսունի չափ կտրըրուած գլուխ առնըուեր է։ Եւ Եէշար փաշայն և Մահմուտ պէկն՝ Ապար-

քոսին կողմանէ պարգևներու, և Ռըզային կողմանէ գովուեստ արժանի եղեր են։

Նաև Նապըքօրը՝ Պօշնախներուն համարձակութեան և յանդգնութեան առթիւ եղօղ Լափ և Պ.ուլագ անունովութիւններուն պաշտօնները տալու պէտք եղած հարկաւոր պատրաստութիւնները տեսնալու և կատարելու վրայ է։

Հին սովորութիւն էր, որ թագաւորական բանակը եթէ Անատոլուի կողմը ելլալու ըլլար, բանակին դատաւոր եղօղին՝ Խասամպօլուի վիճակը արքունական կողմանէ արփալըխ կը տըրըվէր. և եթէ Րումէլիի կողմն ելլալու ըլլար, Սերեզի վիճակը արփալըխ կը տըրըվէր։

Արդ Անատոլուի ընդհանուր հրամանատար Հիւսէին փաշային հետը՝ բանակի դատաւոր սէյիտ Մուսա էֆէնտին դըրըկվեցաւ, ինչպէս ասկէց յառաջ տըպված Լրոյ գրերուն մէջը գըրված է. և Խասամպօլուի վիճակը անոր արփալըխ տըրըվեցաւ, որ առաջիկայ զիլքատէի ամսոյն մէկէն սկսի։

—

Քիչմը յառաջ Ինկիլիզի տէրութեան մեծ դեսպանութե պատուով և յատուկ պաշտօնով թագաւորեալ քաղաքը եկօղ Իսթըրաթֆօրթ Գ.եանին՝ բերած բարեկամական նամակը Ռըզային տալու համար, այժմ սովորական կերպով այս շէվալ ամսոյն 15 ին շաբաթ օրը ժամը չորս և կէսին չըրաղան ըսված արքայական պալատը գալու արքունական հրաման եղեր էր։

Նաև դեսպանին հիւրընկալ (միհմանտար) եղօղ լաղըճի միրալայի Մուհամմէտ պէկին հետ ընկերանալով՝ սահմանադրեալ ժամանակը նոյն ծովեզերեայ թագաւորական պալատը եկեր է։ Նաև արքայական քարտուղար (սըրքեաթիպի) մեծապատիւ Մուստաֆա էֆէնտիին հետը տեսութիւն ըրեր, և վայելուչ յարգանք և ընդունելութիւն եղեր է. և կէս ժամի չափ ժամանակ հոն կենալէն յետոյ՝ Ինքնակալին առջևը մըտեր, և սիրոյ նամակը տըվեր է։

Նաև Րէիս էֆէնտիին միջնորդութեամբ, և ատենական թարգման Խալիլ Էսրար էֆէնտիին հասկըցընելովը՝ երկու տէրութեանց մէջը յայտնի եղած սիրոյն վրայ՝ այն տեղը քանի մը բարեկամական խօսակցութիւններ եղեր է։

Նաև դեսպանին պատուական ակունդի քարերով զարդարուած տուփ մը, և անոր խորհրդական նօտարին (սըրքեաթիպին) և առաջին թարգմանին գոհարազարդ տուփեր՝ արքայական կողմանէ պարգև տըրըվեր է։ Նաև անկէց դուրս ելեր, և արքունի խորհրդական քարտուղարին հետը տեսութիւն ըրած սենեակը եկեր է. և քիչմը ատեն հոն տեղը խօսակցութիւն եղեր է. և երթալու ժամանակը պատուական զարդարուն ձի մը՝ Ռըզային կողմանէ դեսպանին պարգև տըրըվեր է։

—

Անձրևի ջուրերը հաւաքված տեղը, կէս ժամ երկայնութեամբ և 150 կանգուն լայնութեամբ եղած մեծ պէնտին հետը, 1000 կանգուն երկայնութեամբ, և 100 կանգուն լայնութեամբ Թաաղուս ըսված պէնտին մէջերը՝ տըղմով (չամուռով) լեցված ըլլալով, ամառուան ատենները ջուրը կը պակսէր. և Թագաւորական քաղաքին բնակիչները ջրէն նեղութիւն կը քաշէին։

Բարեբախտ Ինքնակալը լսելով հրաման ըրաւ տիղմերը մաքրելու. և արքունի շինուածապետ ապտիւլ Հալիմ էֆէնտիին գիտութեամբը և վերակացութեամբը՝ անոր քեհեայ Թահիր էֆէնտիին այս գործոյն կատարումը յանձնըված էր. և 1500 բանուոր, և 200 գըրաստ (պէկիր) աշխատցընելով Թաաղուս պէնտին մաքրելը յառաջ ըսկըսված էր. և լըմընցածին պէս, մեծ պէնտին մաքրելը պիտի ըսկըսվի։

## ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

—

Րումէլիի կողմը գըտնըվօղ տաքէրի մէջ սուրէէի գունդերէն՝ չորրորդ, վեցերորդ, ութերորդ, տասն և մէկերորդ հետևակ

գունդերը, արքունական կողմանէ Թագաւորեալ քաղաքը գալու հրաման եղած էր. ինչպէս ասկից յառաջ տպեալ Լրագրին մէջը յայտնի է։

Եւ ահա այս ձըմեռվան օրերըս՝ օդին սաստիկ ցըրտութեն ճանապարհին ճամբը չեկրելով՝ Թագաւորեալ քաղաքը եկան, և զօրաց համար յառկացեալ ձմերոցները բնակեցան. Եւ Պիլիպէի կողմը գըտնըվօղ՝ ասքերի մանսուրեի ձիաւոր գունդերէն վեցերորդ գունդը Թագաւորեալ քաղաքը հասած էր։

---

Կարգաւորեալ զօրքերուն մէջը պատերազմական արհեստը սորվելու և սորվեցընելու սրտի մօտ ջանք ընօղները, ինչպէս որ արքունի կանոնագրքին սահմանած վարձատրութե կերպովը՝ ամէն մէկը իրենց արժանաւորութենը չափ աստիճանի և պատուոյ հասնիլը բարեկարգ սահմանադրութը և արքայական բարձր հրամանաւ հաստատեալ է. առոր պէս ալ այն զօրքերուն մէջը՝ կարգադրութեան ներհակ և զօրականի անվան անպատշաճ գործ ընօղներուն՝ կանոնագրքին հրամայած պատիժը արժանաւոր հատուցումն ըլլալը հաստատեալ է։

Այս միջոցներըս Թագաւորեալ քաղաքը եղօղ ասքերի մանսուրեի հետևակ գունդերէն իններորդ գունդին գնդապետ Պաղը պէկը, և ալայ էմինի Հասան պէկը, զօրականի անվան անպատշաճ և գըտնըված աստիճաններուն պաշտօնութե ներհակ քանիմը գործքեր ընելով՝ ասքերի մանսուրեի կարգէն դուրս հանվեցան։

Եւ անոնց տեղը ուրիշները դնել հարկ ըլլալով, տասն և հինգ գունդին գնդապետ Հասան պէկը՝ հիմա իններորդ գունդին գնդապետ դըրվեցաւ. և անոր տեղնալ մէկ ուրիշ գնդապետ մը կարգել պէտք եղաւ։

Եւ որովհետև վեցերորդ գունդին գնդապետ գըտնըվօղ Ճեզայիրցի Հիւսէյին պէկը, և ալայ էմինի Տահիր պէկը, և առաջին հազարապետ Բաղէշ աղայն, և Սերասքերին դուռը հրամանատարութե գարագօլին մէջը եղօղ երրորդ գունդին՝ չորրորդ Թափօրին հազարապետ Իսմայիլ աղայն, և արքունական պալատին աղաներէն Տահիր աղայն, և յիշեալ երրորդ գունդին չորրորդ Թափօրին սօլգօլ աղասի զիլէլի Ալի աղայն, ամէն կերպով համեստ և խոհեմ և կառավարութե կարող ըլլալնին յայտնի էր. ուստի սոյն Ճեզայիրցի Հիւսէյին պէկը՝ տասն և հինգերորդ գունդին գնդապետ կարգեցաւ. և անոր տեղը ևս ալայ էմինի Տահիր պէկը՝ տեղապահ, և առաջին հազարապետ Բաղէշ աղայն՝ ալայ էմինի, և Իսմայիլ աղայն դարձեալ Սերասքերին դուռը գըտնըվելու պայմանաւ՝ յիշեալ իններորդ գունդին ալայ էմինի, և վեցերորդ գունդին երկրորդ հազարապետը՝ առաջին Թափօրի հազարապետութենը, և երրորդ հազարապետը՝ երկրորդ Թափօրին հազարապետութենը, և չորրորդ հազարապետը՝ երրորդ Թափօրի հազարապետութենը կարգըվելու. Տահիր աղայն չորրորդ Թափօրին, և Ալի աղայն ևս երրորդ գունդին չորրորդ Թափօրին հազարապետ դըրվելու՝ արքայական մեծափառութեանը խնդիր եղաւ։

Եւ այս խնդիրքը վեհափառ Ինքնակալին հաճոյ ըլլալուն պէս, իրենց հրամանագիրները Սերասքերին կողմանէ խըրկըվեցաւ. և Պաղը պէկը Միտիլլի, և Հասան պէկը Սախըզ աքսորվելու համար՝ արքունական կողմանէ Թէզքերէով փաշային դուռը ազդարարութե ըլլայ, որ հրովարտակ տըրվի։ Եւ արքունական հրաման ըլլալով՝ Պաղը պէկին և Հասան պէկին նըշանները՝ Սերասքերին քովը ետ առնըվեցան. և զօրականաց կարգէն դուրս հանելով՝ արքունական հրամանաւ աքսորվեցան։

Եւ վերոյիշեալ զօրավարներուն իրենց աստիճանին նշաններովը հարկաւոր եղած հրամանատարութիւններուն հրովարտակները, Սերասքերին կողմանէ իրենց տըրվեցաւ։

---

Անցեալ ռամազանի սկիզբէն մինչև 'ի վերջը՝ արքունի զօրքերէն 190 հիվանդ հիվանդանոցը մտեր, և 167 առողջացեր ելեր է. և միայն 11 հոգի մեռեր է։

Իւսկիւտար Գօվդաշըի հիւանդանոցը՝ 152 հիւանդ մտեր, և 170 առողջացեր ելեր է. և մէջերնին մեռնող չէ եղեր։

Մալթեփէյի հիւանդանոցը՝ 281 հիւանդ մտեր, և 194 առողջացեր ելեր է. և միայն 18 հոգի մեռեր է։

Պատերազմական մուհիմմադի զօրքերէն 134 հիւանդ մտեր, և 123 առողջացեր ելեր է. և միայն 11 հոգի մեռեր է։

Արքունի Գօվխանայի հիւանդանոցը՝ 76 հիւանդ մտեր, և 83 առողջացեր ելեր է. և միայն 9 հոգի մեռեր է։

Արքունի Թէրսանէի հիւանդանոցը՝ 418 հիւանդ մտեր, և 369 առողջացեր ելեր է. և շատ ժամանակէ 'ի վեր մնացած ախտաւորներէն և հիւանդներէն՝ միայն 57 հոգի մեռած ըլլալը՝ օրական թղթէն յայտնըված է։

Նաև արքունի Թէրսանէի հիւանդանոցի բժիշկը և եզաձին և ձէռահը և այլ սպասաւորները 'ի վաղուց իրենց մէջէն ըլլալով՝ աղէկ կարգի տակ մտած չէր։ Նաև այս անգամ Սէրասքէր փաշային և Գափուտան փաշային խնամք տանելովին՝ այսուհետև նոյն հիւանդանոցը՝ ուրիշ հիւանդանոցներուն բարեկարգութեը պէս, հիւանդներուն հարկաւոր եղած պիտոյքները միշտ պատրաստ ըլլալու համար՝ Ինքնակալէն հրաման եղաւ։

Նաև այս բանիս կառավարութիւնը՝ մեծ էֆէնտիներէն՝ արքունի զօրաց բժշկապետ Աբտիւլհագգ էֆէնտիին յանձնըվեցաւ. և նոյն էֆէնտին ևս այս պաշտօնին մէջը իր ճարտար խոհեմութիւնը բանեցընելով, նախ և յառաջ այն հիւանդանոցին բժիշկը և ձէռահը և այլ սպասաւորները փոխեց, և անոնց տեղը յարմար և բաւական ամսական տալով՝ հմուտ մարդիկներ կարգեց։

Նաև ապա հիւանդներուն պէտք եղած հանդերձը և տէօշէկը և եօրղանը և ուրիշ հարկաւոր բաները նորէն շինել տըվաւ. և հիւանդները՝ իրենց ախտին յարմար օտաներու մէջ տեղաւորեց. և անոնց վրայ հաւատարիմ վերակացուներ և հիւանդնայօղներ և յատուկ սպասաւորներ կարգեց, որ անոնց դեղերը և կերակուրը և ջուրերը ժամանակին պատրաստ ընեն։

Ասոր այժմ գթառատ Արքային հովանաւորութեը՝ բոլոր հիւանդները և ցաւագարները հանգիստ ըլլալով, վեհափառ Ինքնակալին աղօթող ըլլալնին՝ արքունի բժշկապետին կնքեալ ցուցակ թղթին մէջը գրըված է։

## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Չիրմէն գաւառին բդեշխ մեծարգոյ Հիւսէյին փաշայն՝ մեծափառ Տէրութեը կողմանէ Անատօլուի ընդհանուր հրամանատար, և իր հետը եղող արքունական և մանսուրէ զօրքերուն սպարապետ կարգըվելը՝ 18 Նոյեմբրայով տպեալ Լրոյ գըրին մէջը յիշված էր։

Նաև նոյն բդեշխին կառավարութեը և իշխանութեը վերաբերեալ արքունական պաշտօնները բերնով իրեն խօսվելէն 'ի զատ, այն մեծ աստիճանը որ մինչև ցայժմ միայն թագաւորեալ քաղաքը գտնըվող եպարքոսներուն պատերազմի գնալու ժամանակը տալ յատկացեալ էր, այժմ վեհափառ Ինքնակալը իր իմաստուն և լուսաւոր մտքին բարեկարգութեը վերոյիշեալ փաշային շնորհեց։

Նաև այս կառավարութեը վրայ՝ մեծափառ Արքային իր կամքը և հրամանը բացատրելու մտօք՝ յիշեալ փաշային տըվելու հրովարտակը՝ եպարքոսներուն յատկացեալ պատվովը արքայական հրամանագրով գըրըված՝ փէրիդի աղէքի խասսա պէկլէր պէկի Ահմէտ փաշային հետ՝ այս չէվալ ամսոյ 24 երկուշաբթի օրը փաշային դուռը ուղարկելով. Հիւսէյին փաշայն և այլ հարկաւոր անձինքը դուռը գալու՝ և այն արքունի հրովարտակը յայտնապէս կարդացվելու հրաման եղած էր։

Ասոր Հիւսէյին փաշայն և բանակին (օռտուլին) Գատտուրը, և առաջին Տէֆթերտարը, և բանակին Տէֆթերտարը, և մուգադդամաթ Նազըրին, և մօրաֆ Նազըրին, և զարպխանէ Նազըրին, փաշային դուռը կոչվեցան. բայց միայն Տէֆթերտարը տկար ըլլալով չկրցաւ գալ։

Եւ Ահմէտ փաշայն հրովարտակը ձեռքը բռնած՝ Բէյիս էֆէնտիին սենեակը (օտան) կըսպասէր․ և Գայմագամ փաշայն, և ներկայ գտնըւողը վերոյիշեալ անձինքը, և Քէհեա պէկը, և Բէյիս էֆէնտին, և Չաւուշ պաշին, սանկ ալ արզ օտասին մէջը բարևելու համար կարգաւ կըսպասէին։ Եւ փաշայի դրան պաշտօնատարներէն՝ Թէզքէրէճի, և Մէքթուպճի, և Թէշրիֆաթճի, և Պէյլիկճի, և Ամէտճի, և Քէհեա պէկ քէաթիպի, և արքունի դիվանի Թէրճիման, և Մէքթուպճիի պաշ խալէֆէ էֆէնտիները, և Բէյիս և Պէյլիկճի էֆէնտիներուն Քէսէտարները, վերոյիշեալ Ահմէտ փաշային սպասած սենեակէն դիմաւորելով խոնարհեցան․ և առջևէն պուխուրտանով տիվան խանէին դուռնէն մտան։

Եւ այն ժամանակը Հիւսէյին փաշայն՝ Թէշրիֆաթ քեսէտարին, և Թէշրիֆաթ խալիֆէսին՝ իր խոլթուխները մտած, տիվան խանէին մէկալ դուռնէն ելլալով, յարգութ՟ հրովարտակը դիմաւորեց, և խոնարհութ՟ առաւ համբուրեց․ և դիվանի չաւուշները մաղթանք կարդացին։

Եւ ապա Հիւսէյին փաշայն արքունի հրովարտակը յարգութ՟ վեր բռնած՝ յիշեալ Ահմէտ փաշային հետը արզ օտասին մտաւ, և հոն ներկայ գտնըւողներուն բարևեց․ և այն հրովարտակը կարդալու համար՝ Բէյիս էֆէնտիին տըվաւ․ և անալ առաւ համբուրեց․ և յառաջ մէջը գրըվածը, և յետոյ ձակատը գրըված արքունի հրամանագիրը բարձր ձայնով կարդաց։ Եւ ապա բանակին դատաւորը՝ Ինքնակալին կենացը երկարութիւնը, և Արքային կամացը հպատակ եղող բոլոր ծառայներուն բարեյաջողութիւնը, և թշնամիներուն կորսուելուն և բնաջինջ ըլլալուն համար, արաբացոց լեզւաւ մաղթանք կարդաց։

Եւ քիչմը ժամանակ նստըվելէն յետոյ՝ մեծարու Գայմագամ փաշայն՝ և ներկայ գտնըւող վերոյիշեալ անձինքը՝ Հիւսէյին փաշային առջևէն, և յիշեալ Ահմէտ փաշայն՝ նաև Քէհեա պէկը խոլթուխները մտած՝ վար իջան․ և Գայմագամ փաշայն մինչև տիվանխանէին դուռը գնաց, և ուրիշները մինչև նըտիվէնին գլուխը՝ և մինչև պինէկ թաշին արժանաւոր պատիւ տալով իջան։

Եւ Չաւուշ պաշին՝ և փաշայի դրան ուրիշ պաշտօնատարները՝ յիշեալ բանակին Դատաւորին, և Տէֆթէրտար էֆէնտիին հետ ձի հեծան․ և Հիւսէյին փաշայն աջ կողմը և ձախ կողմը եղողներուն ոսկի ցըրվեց․ և փաշայի դրան մանսուրէ զօրքերը կարգաւ շարված՝ նախ եկած ժամանակը բարևեցին, և ապա արզ օտասին մէջը արքունի հրովարտակը և հրամանագիրը կարդացվելէն յետոյ՝ անոնց նուագողները մուզըգայ չալելով ներկայ գտնըւողներուն ականջը ուրախութ՟ ձայներով լեցուցին։ Եւ Հիւսէյին փաշայն հանդիսով ետ դառնալու ատենը, նոյն զօրքերը վերստին բարևեցին, և այնպէս փառաւորութ՟ իր բնակարանը դարձաւ։

Ուստի սոյն փաշային՝ Թագաւորին կողմանէ իրեն շնորհ եղած կատարեալ իշխանութիւնը՝ և Անատօլուի ընդհանուր կառավարութիւնը՝ Անատօլուի մէջը եղողներուն իմացընելու համար, սոյն ձակատը արքունական գրով գրըված հրովարտակին օրինակները գրվելով Հիւսէյին փաշային հրամանագրին հետ մէկ տեղ Անատօլուին երեք կողմը, նաև Ռումէլիի Չիրմէն գաւառը խրկելով տարածվեցաւ․ և ահա արքունի դիվանին կողմանէ տըրված մէկ օրինակն ալ՝ այս Լրոյ գրին մէջ տպվեցաւ։

## ՕՐԻՆԱԿ ԱՐՔՈՒՆԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՆ։

Դուն որ՝ ընդհանուր Հրամանատար (Սէրասքէր եքրէմ) գովելի Հիւսէյին փաշայ ես, ահա այս բարձր արքայական Հրովարտակովս՝ քեզի կատարեալ իշխանութ՟՝ Անատօլուի կողմն ընդհանուր կառավար կացուցի։

Քեզ նայիմ, որ այս հրամանիս կերպովը ջանք ընելով՝ բոլոր արքունի և ման-

սուրբ զօրքերըս և ուրիշ պատերազմող մարդիկները լաւ կառավարես · և պատերազմի առենը օգնականութեն ալ արիութի ցուց տաս · քաջ և ընտիր գտնըվող զօրավարներուն փոխարէն հատուցանելով մեծութի տաս · եթէ փոքր զօրավար է՝ մեծ զօրավարներուն աստիճանը հասցընես, և եթէ ուրիշ կերպ պաշտօնի և ծառայութե մէջ գտնըվողներէն է, անալ վարձատրես ։

Նմանապէս զօրքերուն մէջէն յանցաւոր գտնըվողները աստիճանէն հանելէն յետոյ՝ պատերազմական դիվանին գիտութեը պատժես · և ուրիշ պաշտօնատար և հրամատարներէն պակասութի ընողներուն՝ արժանաւոր պատիժը տաս ։

Վերջապէս բոլոր Անատոլուի նահանգներուն մէջ վարձատրելու և պատժելու կանոնները կատարելու ժամանակը՝ աղէկ նայիս · և այն երկիրները բնակող ժողովուրդները և աղքատները և ռայեաները՝ խընամես և պահպանես · և իմ մեծի տէրութես և կրօնքիս պատշաճ գեղեցիկ և մեծ յիշատակմը յառաջ բերելու ջանք ընես · Ած արդար՝ իր սուրբ անվանը շնորհօքը բարի յաջողութիը պարգևէ, ամէն ։

## ՕՐԻՆԱԿ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ ։

Գերագոյն հրամայօղ, բարձրագոյն դիտօղ, տիեզերաց կարգադրօղ, ժողովրդոց կառավարօղ, սրատես մտօք՝ հասարակաց գործքերը նախապատրաստօղ, ուղիղ դատողութե՝ մարդոց պիտոյքը կատարօղ, տէրութե և յաջողութե շինվածքը հաստատօղ, մեծութե և անդորրութե պատվարները ամրացընօղ, մեծի իշխանութե օրէնքները կատարօղ, վեհափառ Ինքնակալութե աստիճանները կարգաւորօղ, բարձր Թագաւորութեր ղանազան բարերարութեը լեցվօղ, ներկայիս Չինմեն գաւառին իշխեցօղ, և այս անգամ գերահամբաւ Թագաւորութես կատարեալ իշխանութեը Անատոլուի կողմն գերագոյն հրամանատար, և հետը գտնըվելու ալքունի և մանսուրէ զօրքերուս սպարապետ կարգեալ բարեջան հիւսէյին փաշայ՝ յայտ լիցի քեզ ·

* Դու որ ընդհանուր հրամանատար և տէրութես հաւատարիմն ես, քեզի վերահասու ընել չըհարկաւորիր · որ Եգիպտոսի բդեշխ Մուհամմէտ ալի փաշայն միայն իր անկարգ ցանկութեը հետևելով, մեծի Տէրութես կողմանէ ամենևին կամք և հրաման չեղած՝ Սայտայու բդեշխին վրայ ինքնագլուխ ցամաքէն և ծովէն զօրքեր ուղարկելով, Թագաւորական պաշտպանեալ բերդերէս եղած Եաֆայի բերդը աներկիւղ տիրելը, նաև Աքեայի բերդը պաշարելով պատերազմելու հետևիլը, ամէն կերպով դատաստանի և արքայական հրամանիս ներհակ ըլլալուն համար, խակոյն իր խըրկած զօրքերը ետ դարցնելուն և իր ըրած անկարգ գործքերէն ձեռք քաշելուն համար՝ անկեց յառաջ Տէրութես գործակալներէն մէկը յատկապէս խրկըվելով՝ պէտք եղած խրատները և պատվէրները ամէն պարագաներով իրեն գրվեցաւ ։

Յետոյ իրէն պատասխանի եկած գրին մէջը՝ բերած սնոտի պատճառները և խընդրած բաները՝ թէ դատաստանաւ և թէ Թագաւորական կանոնիւ ամենևին ընդունելու բան չըլլալը յայտնի էր · բայց արքայական առատ գթութեամբս կրկին խըրատելը յանձն առնելով՝ վերըստին զգուշացընելու՝ սաստիկ հրամանագրեր խըրկվեցաւ · և թէպէտ մինչև հիմա պատասխանը գալով միտք բանին աղէկ չէ իմացվէր · սակայն այս բդեշխին գործքերուն նայելով՝ իր անկարգ ճանապարհէն ետ չըդառնալը մտքէ հեռու չէ · եթէ ասանկ է, որոշմութեն ալ դատաստանական օրինօք անոր արժանաւոր հատուցումը տալ իմ Թագաւորական հզօր անձիս պարտք ըլլալը յայտնի է ։

Ուստի այս բանիս վրայ նախապատրաստութի ընելով մէկ քանի կողմերը բդեշխներ, և ֆէրիգ մանսուրէ պէկլէր պէկի, և իշխանաց իշխաններ, և ալքունի և մանսուրէ զօրաց գաւառապետ փաշաներ իրենց զօրավարներովը խրկըված է ։ Եւ մէկ կողմէն խրկըվելու վրայ եղած հե-

տեւակ և ձիաւոր այրուձի և մանսուրէ զօրաց և ուրիշ զօրականներու և զօրավարներու վրայ՝ Է հանուր հրամայողը՝ հաւատարիմ և խոհեմ և քաջ, և պատերազմները ջնջելու կարող, և կարգ և կառավարութիւն գիտցող փորձեալ վեզիրմը հարկաւոր ըլլալով, քու ասանկ մէկ վեզիրմը ըլլալդ խնդրաննէ անոր թագաւորութեան յայտնի ըլլալուն համար՝ ահա քեզի Անատոլուի ընդհանուր հրամանատար կացուցի. և ողորմութեամբ Աստուծոյ այս մեծ գործքին մէկ բարի թագաւորական կամացս համեմատ վախճանը տալդ, մինչև հիմա ջանացողութեդ և հաւատարմութեդ ծառայելէդ յայտնի կիմացուի.

Նաև ամէն կերպով քեզի աղէկ ճանչնալէս և բարի վարկում և հաւատարմութի քու վրայդ ունենալէս՝ քեզի ընտրեցի. և հետոյդ գաւառներուն բոլորին վրայ իշխանութի ունիս կատարել տալու և արգելելու. և որմէն շնորհակալ ըլլաս կամ գանկատ ընես, մեծափառ տէրութես քովը ընդունելի է: Նաև անկէց յառաջ Կարամանի ծովեզերեայ ցամաքին, և Ըրասխատանի կողմերուն սպարապետ դրված՝ այժմեան Հալէպի և Ուռֆայի բդեշխ Մուհամմէտ փաշային, և անոր հետը բազում ձիաւոր և հետևակ զօրքերով հրամանատար եղող Կառամանի բդեշխ Ալիշ փաշային, և Ատալիայի կողմը խրկված Ալէստրէի բդեշխ Մուհամմէտ փաշային, և անոր հետը Թարապուլուսի շամի իշխանաց իշխան և Ճիրտէի պաշտօղ Օսման փաշային, և իշխանաց իշխան Կեսարիայի գաւառին բդեշխ Օսման խայրի փաշային, և արքունի հանքերուս (մատէններուս) Օսման Նուրի փաշային, նաև ասոնք քու հետդ ըլլալով ամէն կերպիւ կամացդ և հրամանիդ հնազանդութեամբ շարժելուն համար՝ պատուէր տալով իրենց հրամանագրեր խրկըլեցաւ: Նաև դու մինչև այն կողմերը գնալու ըլլաս, նախայիշեալ Հալէպի բդեշխը իրեն սպարապետութե հրամանատարութիը կատարէ. և ուրիշ պաշտօնատարները՝ անոր կամացը հնազանդ ըլլալու համար՝ իրենց ազդարարուի եղած է:

Նմանապէս քու հետդ եղող Ֆէրիգի մանսուրէ պէկլէրպէկիսի Մուհամմէտ փաշային, և բոլոր արքունի և մանսուրէ զօրքերուս գաւառապետ փաշաները ևս՝ քեզի իրենց վրայ մեծի տէրութես կողմանէ բացարձակ սպարապետ գիտնալով՝ հրամանէդ դուրս չըգտնըլելու համար, իրենց ազդարարուի եղած է:

Ասոր խնդրաննէ անոր ունեցած հանճարեղութեդ և հաւատարմութեդ և քեզի բերնով խօսած արքայական պատուէրներուս կերպովը՝ յաջողութեամբ Աստուծոյ այս կողմէն դէպ ՚ի Հալէպ երթալով, այս բանին վրայ եղող պաշտօնատարները հարկաւոր եղած կերպովը կառավարես, և ժամանակին բերմունքին նայելով՝ ինչպէս ընել կըհարկաւորի, ողորմութեամբ Աստուծոյ այնպէս կատարել ջանք ընես. և դու այս հարկաւոր գործքին մէջը հրամանատար և երեսփոխան (մուրախխաս), և բոլոր Անատոլուի կողմերուն հրամայելու իմ կողմանէս հրաման առած և յատուկ կարգած ըլլալովդ՝ կարգադրելու գործքերդ շուտով յառաջ երթալու համար՝ եթէ հարկաւոր ըլլայ, արքայական հրովարտակներաւ թուրայով շինելու և գործ ածելու կարող ըլլաս:

Նաև քովդ եղող հրամանատարներէն և ուրիշ գործակալներէն՝ հրամանիդ և պատուէրներուդ հնազանդ եղողները, և կարգած պաշտօնատարներէն հաւատարիմ ծառայութի ընողները, ամէն մէկին իր արժանաւորութեը պատշաճ պարգև տաս, և բարերարութի ընես. և ներհակ գտնըլողները խրատես և պատժես:

Վերջապէս Տէրութես կողմանէ դու Անատոլուի բացարձակ հրամանատար ըլլալովդ՝ այն կողմերուն ամէն բանը միայն քու մտացդ և հաւանութեդ կապված է. աղէկը և վատը քեզնէ կըհարցըվի, և ամէն կառավարութիը քեզի յանձնըված է:

Դու ալ Աստուծոյ օգնականութե և յաջողութեը ապաւինելով՝ ինչպէս որ քեզի արքայական պատուէր տըվի, ամէն մէկ բանին վրայ միտք բանեցընես, և աղէկ պատրաստութիներով շարժիս. սկիզբը և վերջը աղէկ ծառայութիներ որ քեզնէ կըյուսացվի, ջանքով

կատարելու քեզի հրաման ըրի . անոր համար քու պաշտօնդ և պարտաւորութիւնդ յայտնող այս բարձր հրովարտակը յատկապէս քեզի տրուեցաւ ։

Ուստի բանին որպիսութիւնը իմանալուդպէս , թէ այս կերպով և թէ քեզի բերնով խօսած արքայական լրատ և պատուէրներուս հարկադրութիւնը շարժիս և գործես ։ Եւ այս բանիս վրայ կրօնքիս և տէրութեանս լաւ ծառայութիւն և հաւատարմութիւն ցոյց տալով՝ յառաջմանէ ըրած ծառայութեանդ վրայ ջանք ընելով՝ մեկ երևելի յիշատակմը ևս աւելցընելու համար , այս հրովարտակը տրուեցաւ ։

Եւ ահա հրաման ըրի երբ որ այս քեզի հասնի , հնազանդելու և հպատակելու հարկաւոր եղած վեհագոյն հրովարտակիս վերոգրեալ կերպովը կատարող ըլլաս . բարձր նշանիս հաւատարմութիւն ընես ‖ ։

Ի Թվին 1247 շէվալէ վէրջը , Ի պաշտպանեալ քաղաքն Կոստանդնուպօլսէն ։

---

Վերյիշեալ ընդհանուր հրամանատարին հետը՝ Անատօլուին բանակը գումարելու արքունի և մանսուրէ և ուրիշ զօրքերուն պիտոյքը և ռոճիկը հոգալու համար՝ զատ զատ Նիւզիւլ էմիններ և Գասապ պաշիներ դրվիլը հարկ եղաւ ։

Եւ թէպէտ վեհափառ Ինքնակալը իր տէրութեան կանոնները նորոգելովը՝ արքունի և մանսուրէ գունդերուն կերակուրը և պիտոյքը երթալու տեղերնին՝ իրենց վերակացուներուն կողմանէ րաարկով առնըվելուն համար՝ Նիւզիւլ էմինի և Գասապ պաշի դըրվելու հարկ եղած չէ ։

Սակայն այսչափ արքունի զօրքերը իրենց հարկադրեալ տեղերնին հասնելով՝ կերակուր գտնալու դժվարութիւն չըքաշելու համար , նախ պէտք եղած զահրէները և ոչխարները ժողվելու հրաման եղած էր ։

Ուստի այս կարգադրեալ զօրացը զահրէները ժողվելու պաշտօնատարութիւը՝ յառաջմանէ Ֆիլիպէի նազըր գափուճի պաշի Իսմայիլ աղայն՝ Նիւզիւլ էմինի դըրվեցաւ . և Անատօլուի մեծատուններէն՝ Կէօլ փազարին վօյվօտա հաճի Մուհամմէտ աղայն ալ իրեն վօյվօտայութիւը վրան մնալով՝ Գասապ պաշի կարգեցաւ ։

Եւ բդեշխներուն և պաշտօնատարներուն և ուրիշ զօրաց համար ալ՝ յառաջմանէ Պօզուխին միւսէլլիմ Սալիհ աղայն՝ Նիւզիւլ էմինի դըրվեցաւ , և Իչէլին գլխաւորներէն՝ յառաջմանէ միւսէլլիմ Էպուիւլ մուին պէկնալ՝ Գասապ պաշի կարգեցաւ . և Պօզուխի միւսէլլիմութիւն ալ գափուճի պաշի հաճի Մէսրուր աղային յանձնըրվեցաւ ։

---

Վերյիշեալ Անատօլուի ընդհանուր հրամանատարը Թուրայով արքունի հրովարտակ գրել տալու համար՝ արքային կողմանէ հրաման առած ըլլալով , փաշային դուան արքունի դիվանին գրագիրներէն , և Եպալըքոսի մէքթուպճի և Քէհեա պէկ քեաթիպի խալֆաներէն , նաև Տէֆթերտարի դուռնէն հրովարտակ և գրեր գըրել տալու՝ պէտք եղածին չափ գրագիրներ , և վէզնէտար , և գրագրութե վերաբերեալ պաշտօնատարներ կարգեցաւ . և ասոնց և թէ արքունի բանակին դատաւոր և տէֆթերտար էֆէնտիներուն բաւական ճանապարհի ծախքը և ալլուսալը պարգևեցաւ ։

---

Նոյն Անատօլուի ընդհանուր կառավարին՝ Իւսկիւտար անցնիլը , և մեկ քանի օր հոն կենալէն յետոյ՝ յաջողութե և օգնականութե յաւիտենականին ոյ իր հրամանատարութե կողմը գնալը , տէրութեանը կողմանէ կամք և հրաման ըլլալով , զիլքատէի 11 բարենշան օրը Իւսկիւտար պիտի անցնի ։